134 Ով իմ բարեկամ, գիտեմ՝ դու էլ ես

1. Ով իմ բարեկամ, գիտեմ՝ դու էլ ես
Որոնում մեկին, որ քեզ հասկանա,
Իմ և քո կողքին փնտրողներ շատ կան,
Բայց դեռ չեն գտել սերը իսկական:

Հիսուսի սերը (3) մեզ կյանք է տվել,
Ուստի հավատա, ո՛վ մարդ սիրելի,
Հիսուսն Իր սերը մեզ է տվել:

2. Որքան էլ փնտրես, իմ քույր կամ եղբայր,
Չկա աշխարհում հարազատ մի բան,
Հավատքի ճամփան, լույսը հիմնական
Հիսուսով լեցուն կյանքն է իսկական:

3. Ուստի ե՛կ, եղբա՛յր, Հիսուսին դառնանք,
Հիսուսով լեցուն նոր կյանք ստանանք,
Աստված է կանչում, շտապենք մենք Նրան,
Հենց Աստված է սուրբ սերը իսկական: